

ԱԶԱՏԱԳՐՎԵԼ ՎԱԽԵՐԻՑ

Դադարի՛ր վախենալուց
Մաս 1

«Ես խնդրեցի Տիրոջը, և նա պատասխան տվավ ինձ, և իմ ամեն ահ ու վախիցն ազատեց ինձ:» Սաղմոս 34:4

1- Վախի հասցրած վնասները

✚ Անդամալուծում է հնարավորությունները

«...Դռները փակված էին այնտեղ ուր որ աշակերտները ժողովված էին Հրեաների վախիցը:» Հովհաննես 20:19

✚ Խափանում է փոխհարաբերությունները

(Ադամ) «...Վախեցի...և թաք կացի:» Ծննդոց 3:10

✚ Խանգարում է երջանկությունը

«Մարդիս սրտին վիշտը կձնշի նրան...» Առակաց 12:25

(Դավիթ) «...Մոլորված եմ իմ տրտմությունում:» Սաղմոս 55:2

✚ Խափանում է հաջողությունը

«Այն երկյուղալի բանից որ վախենում էի, ինձ հանդիպեց:»
Հոբ 3:25

2- Երեք հակաթույններ վախի դիմաց

✚ Ճշմարտություն

«Ճշմարտությունը կճանաչեք. և ճշմարտությունը կազատի ձեզ:» Հովհաննես 8:32

«... Ճշմարտության հայտնությունովը մեր անձերն ընդունելի ենք անում ամեն մարդկանց խղճմտանքին՝ Աստծո առաջին:»
Բ Կորնթացիս 4:2

✚ Մեր

«Վախ չկա սերի մեջ. այլ կատարյալ սերը հեռացնում է վախը. որովհետև վախը տանջանք ունի. բայց նա որ վախենում է, կատարյալ չի սերի մեջ:» Ա Հովհաննես 4:18

✚ Հավատ

«Ամենի վրա հավատքի վահանն առեք. որով կարող լինեք չարի ամեն կրակոտ նետերը հանգցնել:» Եփեսացիս 6:16

«Ինչ որ որ վախենամ՝ քեզ կհուսամ:» Սաղմոս 56:3

Հաջորդ Քարոզի Թեման
ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱԽԵՐԸ
Դադարի՛ր վախենալուց
Հովիվ Սարո Խաչիկեան